

հաստատէ նաեւ Ծործորեցին (Գ): Ուշաշագրաւ է սակայն Լուծողին նշանակած տարբերութիւնը, «շարաթ եւ կիւրակէն երկիցս անգամ ճաշակել» (անդ), որոյ պատճառը պիտի տեսնենք քիչ վերջ:

Բոլոր յիշեալ վկայութիւնք ցոյց կու տան ծոմապահութեան ընդհանուր եւ անփոփոխ ոճ մը, որ է մի անգամ ուտել եւ երեկոյին: Բայց մի եւ նոյն ժամանակ կը վկայեն նաեւ ադոր զանցառութեան գոյութեանը, որոյ դէմ դրուած են այդ կանոններն ու խրատներ: Անշուշտ կային նաեւ կամաւոր եւ աւելի երկարատեւ ծոմեր եւս՝ ինչպէս միւս պահոց մէջ տեսանք (410-1):

Դ. Քառասնորդաց ճաշի յարակից յարդարանքներն ալ՝ նման սովորական պահոց՝ կը լինէին անշուք եւ համաձայն սոյն օրերու տխրութեան: Արշարունին կ'աւանդէ՝ թէ սոյն շրջանը կ'անցնէին «փախուցեալք ի հանդերձից», այս ինքն շքեղներէն, եւ ենթարկուելով «խարազնազգեստուց» խստութեան (Արշ. ԺԲ): Հետեւաբար նոյն ձեւը կը պահէին նաեւ սեղանի վրայ: Այսպէս էր գոնէ այդ մեկնը չին ժամանակ:

Ե. «Առաքելական կանոնաց» մէջ կայ հետեւեալ պատուէրը. «Եթէ ոք ժառան-